Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-21/3-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08.06.2021թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը և Լ. Թունյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-21/3-Տ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2021 թվականի մայիսի 31-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԾՁԲ-21/3-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են)

ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	էլեկտրոնային հասցե
«Մելիորացիա» ՓԲԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ, Էջմիածնի փ.22 099 565499	melioracia00@mail.ru

Մասնակցի գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ **1 225 350** ՀՀ դրամ/ Տեխնիկական հսկողության ծառայություններ - Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի կատարի բարձրացման (5/2, 5/3 և 5/4 սահմանային նշանների հատվածում) շինարարական աշխատանքներ				
	«Մելիորացիա» ՓԲԸ	1 750 000	350 000	2 100 000
Չափաբաժին 2 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ **579 600** ՀՀ դրամ/ Տեխնիկական հսկողության ծառայություններ - Արաքս գետի ափի 17/2 սահմանային նշանի մոտ ամրացման շինարարական աշխատանքներ				
	«Մելիորացիա» ՓԲԸ	950 000	190 000	1 140 000
Չափաբաժին 5 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ **261 900** ՀՀ դրամ/				

Տեխնիկական հսկողության ծառայություններ - «Երևան» ջրօգտագործողների ընկերության կողմից սպասարկվող Մասիսի տարածաշրջանի Դաշտավան, Նորամարգ, Դարբնիկ, Մասիս, Զորակ համայնքների ինքնաշատրվանող խորքային հորերի բաժանարար կետերի փականներով և ջրաչափերով կահավորման աշխատանքներ				
	«Մելիորացիա» ՓԲԸ	500 000	100 000	600 000

ՋԿ-ԳՀԾՁԲ-21/3-Տ ծածկագրով ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար հայտեր չեն ներկայացվել:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը.

Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասնակից «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չեն: Ներկայացված չեն Հավելված 1.1, «Աշխատանքային ռեսուրսների» որակավորման (Հավելված 3 և կից փաստաթղթեր) և «Մասնագիտական փորձառություն» (նմանատիպ պայմանագրեր) չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերը՝ Հանձնաժողովը 03.06.2021թ-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 04.06.2021թ. ժամը 17:30-ը շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկվել են:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-21/3-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համարել հրավերով սահմանված տեխնիկական չափանիշների պահանջներին համապատասխան,
2. «Մելիորացիա» ՓԲԸ-ի 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները գնահատելու համար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԾՁԲ-21/3-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը, «Մելիորացիա» ՓԲԸ-ին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 11.06.2021 թվականին ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ),
3. Հրապարակել հայտարարություն ՋԿ-ԳՀԾՁԲ-21/3-Տ ծածկագրով ընթացակարգի 3րդ և 4-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին,
4. Ընտրված մասնակից ճանաչելու համար՝ բանակցությունների ավարտից հետո ամփոփել հայտերի գնահատումը (տեխնիկական չափորոշիչների և գնային առաջարկների ընդհանուր գնահատումը):

3. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ		Գ. Ալոյան
անդամներ		Ա. Սիմոնյան
		Լ. Թունյան
Քարտուղար		Ա. Սարգսյան